Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքները և եզրակացությունը վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 2017թ. ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) մշակել և իր 2017 թվականի հունվարի 18-ի թիվ 3-Ա որոշմամբ հաստատել և հրապարակել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը»:

2017թ. մարտի 5-ից մինչև ապրիլի 2-ը Հանձնաժողովն իրականացրել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող թվով 31 հեռուստաընկերությունների և 13 ռադիոընկերությունների վերգետնյա եթերային հեռարձակմամբ սփռված ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխանության վերահսկողություն:

Հանձնաժողովը հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հեռարձակած ծրագրերի մշտադիտարկումն իրականացրել է.

- հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) անմիջական դիտարկման արդյունքների.
- գրանցամատյանների և հեռուստառադիոընկերություններից ստացված տեղեկատվության.
- ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և (կամ) նրանց ներկայացուցիչների Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության.

- հեռուստառադիոընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության խախտումների մասին լրատվամիջոցների հրապարակումների.
- պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների Հանձնաժողով ներկայացրած կամ հրապարակած տեղեկատվության.

ուսումնասիրության հիման վրա:

Նշված ժամանակահատվածում անմիջական դիտարկման է ենթարկվել հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ավելի քան 5280 եթերաժամ, որից 3720 ժամը՝ հեռուստածրագրերի մշտադիտարկում, իսկ 1560 ժամը՝ ռադիոծրագրերի մշտադիտարկում: Հանձնաժողովը ուղղակի մշտադիտարկումը (այդ թվում՝ գործուղումների միջոցով) իրականացրել է հեռուստառադիոընկերությունների վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Ուղղակի մշտադիտարկման նշված ծավալների իրականացման նպատակով Հանձնաժողովը հրավիրել և իր աշխատանքներում ներգրավել է մասնագիտական լրացուցիչ ռեսուրսներ: ԼՂՀ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովից 2017թ. ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Հանձնաժողով են գործուղվել որակավորված աշխատակիցներ:

Վերգետնյա հեռարձակում իրականացնող հեռուստաընկերություններն ու ռադիոընկերությունները 2017թ. ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում Հանձնաժողով են ներկայացրել իրենց կողմից հեռարձակված ծրագրերի մասին տեղեկատվություն: Ստացված տեղեկատվությունը տվյալներ է պարունակել յուրաքանչյուր ընկերության

կողմից ընտրությանը մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին.

- անվճար կարգով տրամադրված եթերաժամանակի.
- վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի.
- նրանց և (կամ) նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ հաղորդումների ընդհանուր տևողության.
- լրատվական ծրագրերում նրանց նախընտրական քարոզչության միջոցառումների լուսաբանման ընդհանուր տևողության.

մասին:

Ստացված տեղեկությունները համադրվել են Հանձնաժողովի անմիջական դիտարկման արդյունքների հետ, համակարգվել և ամփոփվել են Հանձնաժողովի տեղեկանքներում, որոնք, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ 14.03.2017թ., 24.03.2017թ. հրապարակվել են Հանձնաժողովի կայքէջում, ինչպես նաև նշված ժամկետներում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով:

2017թ. ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի և դրա սակագնի մասին հայտարարել են թվով 30 հեռուստաընկերություն և 7 ռադիոընկերություն:

Հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են 2017թ. ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից 05.03.17-31.03.17թթ. ժամանակահատվածում տրամադրված եթերաժամանակի հետևյալ ցուցանիշները.

- անվճար կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 2388 րոպե: Ընտրություններին մասնակցող կուսակցությունները և

կուսակցությունների դաշինքները օգտագործել են իրենց համար նախատեսված 3240 րոպեից անվճար եթերաժամանակի ընդամենը 73.7 %-ը,

- վճարովի կարգով տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 16 376 րոպե 45 վայրկյան,

հեռուստառադիոընկերությունների հաղորդումներում՝ բացառությամբ լրատվական թողարկումների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների մասնակցության ընդհանուր տևողությունը կազմել է 74 617 րոպե 39 վայրկյան,

- հեռուստառադիոընկերությունների լրատվական թողարկումներում ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից իրականացված նախընտրական քարոզչության

լուսաբանման ընդհանուր տևողությունը կազմել է 53 574 րոպե 48 վայրկյան,

- նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող

հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից տրամադրված ընդհանուր եթերաժամանակը կազմել է 146 957 րոպե 12 վայրկյան, այսինքն, ավելի քան 2449 ժամ:

2017թ. ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի խախտումներ չեն արձանագրվել:

2017թ. մարտի 5-ից մինչև ապրիլի 2-ը ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովն ընտրություններին մասնակցող կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից ստացել է 1 բողոք, ինչի հետ կապված հարուցվել է վարչական վարույթ, որը կարճվել է: Պետական մարմիններից, հասարակական և

միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից, քաղաքացիներից նախընտրական քարոզչությանը վերաբերող դիմում-բողոքներ չեն ստացվել:

Կից ներկայացված աղյուսակում ներկայացված են նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամանակի վերաբերյալ տվյալներ:

Կից ներկայացված աղյուսակում ներկայացված տվյալներից երևում է առանձին հեռուստառադիոընկերություններից յուրաքանչյուրի կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամանակի որոշակի անհամաչափություն: Հանձնաժողովը իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է եզրակացության, որ այն պայմանավորված է վերջիններիս կողմից իրենց նախընտրական քարոզչության պլանավորման և իրականացման՝ միջոցառումների քանակական, տարածքային և ժամանակացուցային բաշխման անհամասեռություններով, քարոզչության իրականացման, ինչպես նաև նրանց նախընտրական հիմնադրամներում առկա միջոցների, անվճար և վճարովի եթերաժամանակի օգտագործման, հեռուստառադիոծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամության առանձնահատկություններով: Այս հանգամանքով պայմանավորված եթերաժամանակի տրամադրման անհամաչափությունները Հանձնաժողովը որպես հեռուստառադիոընկերությունների կողմից ընտրությանը մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նկատմամբ հավասար պայմաններ ապահովելու խախտում չի գնահատել:

2017թ. ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության (05.03.17-31.03.17թթ.), ինչպես նաև քվեարկության նախորդ օրը և քվեարկության օրը մինչև ժամը 20^{00}-ն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

05.03.2017-31.03.2017 ընկած ժամանակահատված

գրանցված կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների անունները	անվճար կարգով տրամադրված եթերաժամանակը	վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակը	այլ հաղորդումներում իրականացված քարոզչության եթերաժամանակը	լրատվական թողարկումներում իրականացված քարոզչության լուսաբանման եթերաժամանակը	լրատվական թողարկումներում և այլ հաղորդումներում իրականացված քարոզչության ընդհանուր եթերաժամանակը
1 ԵԼՔ կուսակցությունների դաշինք	320' 40''	936' 22''	9,398' 12''	6,116' 03''	15,514' 15''
2 ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	330' 32''	289' 32''	8,616' 32''	5,851' 05''	14,467' 37''
3 ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	165' 26''	1,725' 05''	6,549' 22''	6,294' 47''	12,844' 09''
4 ԾԱՌՈՒԿՅԱՆ կուսակցությունների դաշինք	261' 24''	3,242' 27''	9,711' 00''	5,908' 36''	15,619' 36''
5 ԿՈՆԳՐԵՍ-ՀԺԿ կուսակցությունների դաշինք	321' 22''	1,537' 31''	8,765' 31''	6,322' 41''	15,088' 12''
6 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	357' 34''	5,482' 55''	8,291' 25''	5,688' 28''	13,979' 53''
7 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	269' 36''	156' 41''	7,012' 30''	5,323' 34''	12,336' 04''
8 ՕՀԱՆՅԱՆ - ՐԱՖՖԻ -ՕՍԿԱՆՅԱՆ կուսակցությունների դաշինք	249' 06''	2,417' 59''	8,500' 00''	5,901' 48''	14,401' 48''
9 ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	112' 20''	588' 13''	7,773' 07''	6,167' 46''	13,940' 53''